

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ  
ՄԱՐԶԻ ԶԻՎԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....	5
3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ .....	7
4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ.....	12
5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՑՈՒՆԵՐԸ.....	14
6. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ .....	19
6.1. ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	19
7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ.....	21
8. ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ .....	21

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Չիվայի միջնակարգ դպրոցի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակել էմ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածին և այլ իրավական ակտերի համապատասխան՝ հաշվի առնելով դպրոցի և մանկավարժական կոլեկտիվի ձեռքբերումները և դրանցում առկա հիմնախնդիրները:

Հայաստանի Հանրապետությունն այսօր կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Կրթության ոլորտը կարևորվում է որպես մեր երկրի կայուն առաջընթացի և զարգացման նախապայմաններից մեկը: Ըստ այդմ՝ այն պետք է բավարարի և՛ յուրաքանչյուրին, և՛ ողջ հասարակությանն ու պետությանը՝ որպես հավաքական ամբողջություն:

Զարգացման ծրագիրը մշակելիս օգտագործել էմ համակողմանի հետազոտություններին և դիտարկումներին արդյունքները, որոնք միտված են առկա հիմնախնդիրների և դրանց լուծումների մեխանիզմների բացահայտմանը՝ կրթության մատչելիություն, կրթության որակ, կրթության բովանդակություն, կրթության արդյունավետություն:

Յուրաքանչյուր զարգացման ծրագիր պետք է լինի ներառական, և կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակից (ուսուցիչ, աշակերտ, ծնող) տեսնի իր դերն այս ծրագրում: Ծրագիրը պետք է բոլորին մղի գործողությունների:

Այս ծրագրի հիմնաքարը այն հարցն է, թե ինչպիսին պետք է լինի դպրոցն ավարտած ապագա քաղաքացին, իսկ ծրագրի բաժիններում պատասխանել էմ այդ կարևոր հարցին հետևյալ շեշտադրումներով.

- ✓ Ինչպիսի՞ քարեփոխումներ պետք է անել դպրոցում կրթության որակի բարելավման համար:
- ✓ Ինչպիսի՞ քարեփոխումներ կարելի է անել կրթության բովանդակության ոլորտում:
- ✓ Ինչպիսի՞ քարեփոխումներ պետք է անել մանկավարժական համակազմի մասնագիտական կատարելագործման համար:

Ծրագրի թիրախները, գերակայությունները և գործողությունների շրջանակը առավելապես կենտրոնացրել էմ կրթության առաքելության, հայրենասիրական դաստիարակության, գիտակից քաղաքացու ձևավորման ու ինքնադրսևորման վրա: Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարել էմ գործունեության պլանավորում, որն անհրաժեշտ միջոցառումների

Ժամկետները և պահանջվող համապատասխան ռեսուրսները որոշելու, կադրերի պարտականությունները և պատասխանատվությունը սահմանելու, բաշխելու և ծրագրի բյուջեն կազմելու գործիք է:

Այսպիսով՝ դպրոցի սույն զարգացման ծրագրի մշակման համար կատարել են հետևյալ հաջորդական քայլերը.

1. սահմանել են դպրոցի առաքելությունը,

2. վերլուծել են առկա իրավիճակը, բացահայտել եղած հիմնախնդիրները,

3. սահմանել են հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները,

4. սահմանել են հիմնական գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները,

5. սահմանել են հիմնական ռազմավարությունները, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները, տվել են ծրագրի ակնկալվող արդյունքները:

Այսօր գիտելիքը ամենուր է: Կան գիտելիք ստանալու բազմաթիվ աղբյուրներ և հնարավորություններ: Հետևաբար՝ դպրոցը գիտելիք

փոխանցելու աղբյուրներից ընդամենը մեկն է: Եվ որպեսզի

աշակերտները ցանկանան դպրոցից գիտելիք ստանալ, ուսուցիչը պետք է լինի հետաքրքիր մարդ, ունենա սովորեցնելու, սովորելու, լսելու և

հասկանալու հմտություններ: Մերօրյա դպրոցի հենասյուները պետք է

լինեն արհեստավարժ ուսուցիչները: Ուսուցիչը շատ կարևոր դեր ունի

ուսուցման գործում, սակայն գործընթացի կենտրոնում պետք է լինի

սովորողը: Ուսուցիչը պետք է կարողանա դասարանում ստեղծել

հրապուրիչ ուսումնական միջավայր, որտեղ յուրաքանչյուր սովորող

ազատ և անկաշկանդ կդրսևորի իր առավելագույն ներուժը՝ անկախ իր

հնարավորություններից:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Զիվայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 2003թ. հունվարի 17-ին գրանցվել է

ՀՀ իրավաբանական անձանց պետեգիստրի տարածքային բաժնում (գրանցման համար 65.210.00408, վկայական N 03Ա 058331): Ուսումնական հաստատության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատվել է 2011 թվականի մարտի 21-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.03.2011 թվականի N 23 որոշում) և 2017 թվականի հոկտեմբերի 22-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 22.10.2017 թվականի N 68 որոշում):

Նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության մեջ 2021 թվականի փետրվարի 9-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 09.02.2021 թվականի N 16-Ա որոշում) և 2022 թվականի հոկտեմբերի 14-ին (ՀՀ Վայոց ձորի մարզպետի 14.10.2022 թվականի N 202-Ա որոշում) կատարվել են փոփոխություններ:

Դպրոցի վերջին կանոնադրությունը հաստատվել է 2022 թվականի հոկտեմբերի 14-ին Վայոց ձորի մարզպետի թիվ 202-Ա որոշմամբ:

Դպրոցը իրականացնում է ներքոնշյալ կրթական ծրագրերը՝

- ✓ տարրական ընդհանուր
- ✓ հիմնական ընդհանուր
- ✓ միջնակարգ ընդհանուր

2023-2024 ուսումնական տարում դպրոցը համալրված է 12 դասարաններով, որտեղ սովորում են 62 աշակերտ: Դպրոցին կից գործում է նաև նախակրթարան, որտեղ սույն ուսումնական տարում հաճախում է երկու սան:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄԸ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Դասարան	Աշակերտներ	Աղջիկ	Տղա
1-ին	3	2	1

2-րդ	4	0	4
3-րդ	5	1	4
4-րդ	2	1	1
<b>Տարրական դպրոց</b>	<b>14</b>	<b>4</b>	<b>10</b>
5-րդ	8	5	3
6-րդ	6	5	1
7-րդ	9	4	5
8-րդ	4	3	1
9-րդ	5	4	1
<b>Հիմնական դպրոց</b>	<b>32</b>	<b>21</b>	<b>11</b>
10-րդ	7	3	4
11-րդ	6	4	2
12-րդ	3	0	3
<b>Ավագ դպրոց</b>	<b>16</b>	<b>7</b>	<b>9</b>
<b>Ընդամենը</b>	<b>62</b>	<b>32</b>	<b>30</b>

Դպրոցն աշխատում է հնգօրյա միաժամանակյա ռեժիմով: Դպրոցում աշխատում են 22 ուսուցիչներ, որոնցից մեկն ունի միջին մասնագիտական կրթություն, սակայն 2023 թվականի հոկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի համաձայն անցել է կամավոր ատեստավորում և հաղթահարել 60 տոկոսի շեմը:

2023 թվականի հունվարից դպրոցը հանդիսանում է «ՀՀ գյուղական համայնքներում բացակա ուսուցիչների խնդրի լուծումն էլեկտրոնային դասավանդման միջոցով» ծրագրի շահառու. ֆիզիկա առարկան դասավանդվում է մենթոր դպրոցի միջոցով:

Դպրոցում գործում են առարկայական 3 մեթոդախմբումներ՝ տարրական, հումանիտար և բնագիտամաթեմատիկական՝ համալրված մանկավարժի գործին լավատեղյակ մանկավարժներով: Յուրաքանչյուր ամիս կազմակերպվում և արձանագրվում են մեթոդախմբման նիստերը:

### 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Վայոց ձորի մարզի «Չիվայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմելիս ուսումնասիրել են դպրոցի մասին ամբողջ տեղեկատվությունը, վեր են հանել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման հնարավորությունները և ծրագրի իրագործմանն սպառնացող պոտենցիալ ռիսկերը: Ըստ այդմ, սահմանել են դպրոցի զարգացման իրատեսական նպատակներ և խնդիրներ: Զարգացման ծրագիրը կազմելիս հաշվի են առել նաև դպրոցի նախորդ տարիների ձեռքբերումներն ու թերացումները, դպրոցում առկա հիմնախնդիրները: Հաշվի են առնվել նաև հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N181-Ն որոշման 16-րդ կետի: Ստորև ներկայացնում են կատարած ուսումնասիրության համառոտ վերլուծությունը՝ դպրոցի զարգացման ուժեղ և թույլ կողմերն՝ ըստ ոլորտների:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր (դպրոցի կանոնադրություն, օրինակելի իրավական ակտեր, ներքին իրավական ակտեր, դրանց վարումը)</p>	
<p>1. Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն</p> <p>2. ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվածքային առանձնահատկություններին և վարվում են կանոնադրության պահանջներին համապատասխան</p>	<p>1. Ուսուցիչները պասիվ են մասնակցում օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ կատարելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս:</p>

<p>3. Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողությունն անցկացնելու և SWOT վերլուծություն կատարելու նպատակով</p>	
---	--

**Դպրոցի շենքային պայմանները**

<p>1. Դպրոցի նոր շենքն ունենալու է ժամանակակից բոլոր հարմարությունները կրթական գործընթացը պատշաճ կազմակերպելու համար:</p> <p>2. Կառուցվում է մոդուլային տիպի դպրոց՝ նախատեսված մինչև 100 աշակերտի համար:</p> <p>3. Շահագործման հանձնելուց հետո դպրոցը կահավորվելու է ամբողջովին նոր գույքով, ունենալու է բնագիտական առարկաների համար նախատեսված լաբորատորիաներ՝ հագեցած անհրաժեշտ նյութատեխնիկական սարքավորումներով և հարմարություններով:</p>	<p>1. 2021 թվականի նոյեմբերից Չիվայի միջնակարգ դպրոցի ուսումնական գործընթացը կազմակերպվում է գյուղի մշակույթի տանը՝ պայմանավորված դպրոցի նոր շենքի կառուցման հանգամանքով:</p> <p>2. Դպրոցի 12 դասասենյակները և նախակրթարանը տեղակայված են մշակույթի տան զանազան սենյակներում, գյուղի հին և չշահագործվող գրադարանի շենքում, որտեղ լուսավորությունը թույլ է, ոչ բնական, երեք դասասենյակներ տեղակայված են մշակույթի տան դահլիճում:</p> <p>3. Առկա չէ շուրջօրյա հոսող խմելու ջուր</p> <p>4. Ճաշարանի բացակայությամբ պայմանավորված դպրոցը չի կարողանում դպրոցական տաք սնունդ մատակարարել տարրական դպրոցի սովորողներին</p>
---	--



## Մանկավարժական համակազմ

<p>1. Մանկավարժական և ուսուցչական անձնակազմերն ունեն համապատասխան բարձրագույն մանկավարժական որակավորում:</p> <p>2. Ուսուցիչներն ակտիվ մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող բոլոր սեմինարներին և վերապատրաստումներին:</p> <p>3. Մանկավարժներն ուսումնադաստիարակչական հարցերում դրսևորում են աշակերտակենտրոն մոտեցում:</p> <p>4. Ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ:</p> <p>5. Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ, կիսվում փորձով և արդյունավետ մեթոդներով</p>	<p>1. Ուսուցիչները խուսափում են մասնակցել կամավոր ատեստավորմանը և ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպվող «Տարվա լավագույններ» մրցույթին:</p> <p>2. Որոշ ուսուցիչներ թերանում են ՏՀՏ-ների կիրառմամբ դասեր վարելիս:</p> <p>3. Որոշ ուսուցիչներ չեն կիրառում ժամանակակից մեթոդներ, ՏՀՏ գործիքներ:</p>
--	--

## Կառավարման և խորհրդակցական մարմիններ

<p>1. Դպրոցում գործում են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները.</p> <ul style="list-style-type: none"> <li>❖ Կառավարման խորհուրդ (միացյալ՝ Ելփինի և Ռինդի դպրոցների հետ)</li> <li>❖ Մանկավարժական խորհուրդ,</li> <li>❖ Ծնողական խորհուրդ,</li> </ul>	<p>1. Դպրոցում չեն կազմակերպվում եռակողմ նիստեր, որտեղ կներկայացվեին հաստատության ուսումնադաս-տիարակչական աշխատանքների հաշվետվությունները, իսկ ակտիվ ուսուցիչները, ծնողներն ու աշակերտները կարժանանային խրախուսանքների՝ պատվոգիր, շնորհակալագիր և այլն:</p>
---	---

<p>❖ Աշակերտական խորհուրդ:</p> <p>2. Բոլոր խորհրդակցական մարմինները կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները:</p> <p>3. Ծնողական խորհուրդն ակտիվորեն մասնակցում է ուսումնադաստիարակչական աշխատանքներին:</p> <p>4. Դպրոցը գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում՝ որպես կամավորներ</p>	
---	--

**Աշակերտական համակազմ**

<p>1. Միջինից բարձր առաջադիմություն</p> <p>2. Մասնակցություն ստեղծագործական և սպորտային մրցույթներին</p> <p>3. Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշ</p> <p>4. Ակտիվ մասնակցություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին:</p> <p>5. Մեծ պատրաստակամություն մասնակցելու առարկայական</p>	<p>1. Պասիվ մասնակցություն «Կենգուրու», «Ռուսական արջուկ» միջազգային և «Մեղու» հանրապետական մրցույթներին</p> <p>2. Պասիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաների մարզային փուլերին՝ պայմանավորված Չիվայի՝ մարզկենտրոնից հեռու լինելու և տրանսպորտի բացակայության հանգամանքներով:</p>
--	---

<p>նախագծերին, աշխատելու նոր տեխնոլոգիաներով:</p>	
<p><b>Ուսումնական միջավայր</b></p>	
<p>1. Դպրոցն ապահովված է դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ:</p> <p>2. Ձմեռային սեզոնին դասասենյակներում ապահովվում է անհրաժեշտ ջերմաստիճանը:</p>	<p>1. Պայմանավորված դպրոցի շենքի բացակայությամբ, դպրոցը չունի բնագիտական առարկաների լաբորատորիաներ, հանդիսությունների սրահ, գրադարան</p> <p>2. Դասասենյակները կիսախավար են. դասի ողջ ընթացքում դասասենյակը լուսավորվում է էլեկտրական հոսանքով:</p> <p>3. Գործում է ջեռուցման անհատական-էլեկտրական համակարգ</p>
<p><b>Կրթության որակ</b></p>	
<p>1. Դպրոցում առկա է ազգային գաղափարախոսության հենքի վրա ուսուցման կազմակերպման մոտիվացիա:</p>	<p>1. Կրթության որակի բարելավմանն ուղղված աշխատանքների ոչ նպատակային իրագործումը</p>

#### 4. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառայած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը: Ուսուցման գործընթացին զուգահեռ պետք է մեծ ուշադրություն դարձնել արտադասարանական և արտադպրոցական ուսուցմանը՝ ստեղծելով պայմաններ սովորողների հետաքրքրությունների ու նախասիրությունների բավարարման, ստեղծագործական, նախաձեռնողական կարողությունների և կիրառական հմտությունների զարգացման համար:

N	Ոլորտ	Նպատակ
1	Աշխատակազմ	<ol style="list-style-type: none"> <li>1. Մանկավարժական համակազմի որակական բարելավում</li> <li>2. Կամավոր ատեստավորում ունեցող ուսուցիչների թվի ավելացում</li> <li>3. Տարաբնույթ վերապատրաստումների, մանկավարժական հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքների ապահովում:</li> <li>4. Մանկավարժների մեթոդական աջակցություն, նորարական գիտելիքներով զինելու հնարավորություն</li> </ol>
2	Սովորողներ	<ol style="list-style-type: none"> <li>1. Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության ապահովում՝ պահպանելով փոփոխություններն ու նորարարություններ</li> <li>2. Ապահովել սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքները:</li> <li>3. Արտադասարանական խմբակների ստեղծում և դրանցում երեխաների առավելագույնս ներգրավում,</li> <li>4. Ակտիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաներին</li> </ol>

3	Ուսումնական միջավայր	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում:
4	Խորհուրդներ	1. Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում 2. Համադպրոցական աշխատանքներում կառավարման և խորհրդակցական մարմինների ներգրավվածության ակտիվացում:
5.	Համագործակցություն	Համագործակցություն Արենի խոշորացված համայնքի և այլ դպրոցների հետ:

ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ՝ ԿԱՐԵԼԻ Է ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

h/h	Ոլորտը	Խնդիրը
1	Դպրոցի շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան	1. Նոր շենքի կառուցում 2. Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի հաստատում 3. Նյութատեխնիկական բազայի համալրում նոր՝ ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:
2	Կառավարման և խորհրդակցական մարմիններ	1. Ծնողական խորհրդի ընդգրկում ուսման կարևորագույն գործառույթներում 2. Աշակերտական խորհրդի ակտիվացում և ներգրավում դպրոցի համար կարևոր նշանակություն ունեցող գործընթացներում
3	Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	1. Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում
4	Մանկավարժական համակազմ	1. Հանրակրթության նոր չափորոշիչի ներդրման հետ կապված դժվարություններ ունեցող ուսուցիչներին և սկսնակ ուսուցիչներին աջակցության տրամադրում
5	Տեխնոլոգիաներ և նորարարություն	1. Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների

	<p>շարունակական ներդրում դասապրոցեսում</p> <p>2. Ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում</p>
--	---

5. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԳՈՐԾՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

h/h	Գործողություններ, միջոցառումներ	Պատասխանատուներ	Ժամանակացույց	Անհրաժեշտ միջոցներ ու նյութատեխնիկական պարագաներ
1	2	3	4	5
1	Ուսումնական հաստատության շենքի կառուցում	ԿԳՄՄՆ	2024-2025	
2	Առարկայական դասասենյակների ստեղծում	Վարչատնտեսական համակարգող, տնօրինություն	2024-2026	
3	Ուսումնական ծրագրի յուրացման գործնական բնույթ կրող աշխատանքների ընդլայնում	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2028	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում
4	Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանման միջոցառումներ	Տնօրինություն, ուսուցիչներ	2023-2028	
5	Ստեղծել անհատականացված և մոտիվացնող ուսումնական միջավայր՝ բոլոր սովորողների համար:	Տնօրինություն, ուսուցիչներ	2023-2028	
6	Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցների նրանց	Տնօրինություն	2023-2028	

	գործունեության դերի և որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ			
7	Մշակել և իրականացնել աշխատանքային ծրագրեր, որոնք կնպաստեն ակնկալվող նպատակներին հասնելուն:	Տնօրինություն	2023-2028	
8	Գնահատել աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքում ապահովված առա-ջընթացը, և վերանայել զարգացման ծրագիրը:	Տնօրինություն	2023-2028	
9	Միջոցառումների, զեկուցումների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդությունների (ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ) և դրանց վտանգավորությանը	Տնօրինություն	2023-2028	
10	Ռազմահայրենասիրական դաստիարակության խթանում	Տնօրինություն	2023-2028	
11	Օժտված և շնորհալի սովորողների բացահայտմանը, նրանց կարողությունների մակարդակով կրթության գործի կազմակերպմանը ուղղված աշխատանքներ	Տնօրինություն, ուսուցիչներ	2023-2028	
12	Կառավարման խորհրդի դերի բարձրացում՝ ներգրավելով նրան	Տնօրինություն	2023-2028	

	աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում			
13	Ուսումնական հաստատությունում աուդիո-դասարանների (օտար լեզուների ուսուցման համար) գործարկում	Վարչատնտեսական համակարգող	2023-2028	Աուդիո դասարանների համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ
14	Սոցիալական ծրագրերի իրականացում	Տնօրենություն, ծնողներ, վարչական տարածքի ղեկավար, ուսուցիչներ, սովորողներ	2023-2028	
15	Դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին քննարկումների կազմակերպում	Տնօրինություն	2023-2028 պարբերաբար	
16	Քույր դպրոցի (նաև արտերկրում) գաղափարի ներդրում	Տնօրինություն, օտար լեզվի ուսուցիչներ	2023-2028	
17	Ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում	Տնօրենություն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ,	2023-2028	
18	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումների, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ	Տնօրենություն, մ/մ նախագահներ	2023-2028 պարբերաբար	
19	Ուսուցիչների կողմից սովորողների	Տնօրինություն, ուսուցիչներ	2023-2028	



	Խրախուսման և ակտիվացման մեթոդների կիրառում		պարբերաբար	
20	Փոխադարձ դասալսումների ակտիվացում	Տնօրինություն, մ/մ նախագահներ	2023-2028 պարբերաբար	
21	Կարողունակությունների ձևավորման առաջնայնություն՝ հանրակրթության պետական նոր չափորոշիչն համապատասխան:	Տնօրինություն, ուսուցիչներ	2023-2028 պարբերաբար	
22	Նորացնել կրթության կառավարման համակարգը՝ աշակերտակենտրոն կրթադաստիարակչական աշխատանքը դարձնելով ուսուցման և դաստիարակության գլխավոր պայման:	Տնօրինություն	2023-2028	
23	Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սովորողների, ինչպես նաև սովորողների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն ապահովելու, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ	Տնօրինություն, դասղեկներ	2023-2028	
24	Համագործակցել իրավապահ մարմինների հետ:	Տնօրեն	2023-2028	
25	Ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն	Տնօրինություն, դասղեկներ	2023-2028	

	ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնություններին			
26	Ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին սովորողների ներդպրոցական արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները:	Տնօրինություն, դասղեկներ	2023-2028	
27	Ապահովել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասղեկական պլանների վրա	Տնօրինություն	2023-2028	
28	Սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման	Տնօրինություն, մ/մ նախագահներ	2023-2028	
29	Որակավորման տարակարգ չունեցող և ուսուցիչների համար ստեղծել պայմաններ որակավորման տարակարգի առաջին աստիճանին հասնելու համար	Տնօրինություն, մ/մ նախագահներ	2023-2028	
30	Սահմանել զարգացման ծրագրի յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող գնահատման չափանիշներ:	Տնօրեն, կառավարման խորհուրդ, խորհրդակցական մարմիններ	2023-2028	

## 6. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների՝ (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները) գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

### 6.1. ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների

կատարողականներն են:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ կարող են լինել ներքոնշյալները.

- ❖ զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,
- ❖ համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,
- ❖ դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
- ❖ դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,
- ❖ դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,
- ❖ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,
- ❖ յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների
- ❖ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից:

## 7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ

Ռիսկեր	Ձեռնարկվելիք քայլեր
Ֆինանսական միջոցների կառավարման բարդացված գործընթաց	Որոնել և գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ
Ուսուցիչների և աշակերտների կողմից մոտիվացիայի ցածր մակարդակ կամ բացակայություն	Ներդնել խրախուսման համակարգ
Թերահավատ մոտեցում նորամուծություններին կամ դրանց մերժում	Նորամուծությունների աստիճանական ներդրում
Կրթական ոլորտի մասին իրազեկվածության ոչ բավարար մակարդակ	Մշտապես ծանոթացնել ոլորտի նորություններին, քաջալերել նախաձեռնողներին:

## 8. ՈՐՊԵՍ ՎԵՐՉԱԲԱՆ

Չիվայի միջնակարգ դպրոցը մի յուրահատուկ ընտանիք է. գուցե պատճառը սաների փոքր թիվն է: Դպրոցում բոլորը ճանաչում են բոլորին՝ ապրում միմյանց հոգսերով, կիսում միմյանց մտահոգություններն ու խնդիրները, ուրախանում միմյանց հաջողություններով: Դպրոցը շարունակելու է լինել դպրոց, կրթօջախ և ինչու չէ նաև մշակութային կենտրոն բոլորի համար: Դպրոցը կլինի այն փարոսը, որը կուղեկցի մեր սաներին դեպի լուսավոր ապագա՝ ի բարօրություն և ի հզորություն մեր հայրենիքի:

